


## Հայաստանի Հանրապետության անշարժ գույքի շուկան 2016 թվականի հունիսին


(վերլուծություն)

2016 թվականի հունիսին հանրապետությունում անշարժ գույքի նկատմամբ իրականացվել է 14823 գործարք, որոնց քանակը 2016 թվականի մայիս ամսվա համեմատ աճել է 1.1 %-ով, իսկ 2015 թվականի հունիսի համեմատ՝ նվազել 8.1 %-ով:

2016 թվականի հունիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքների ծավալներն, ըստ մարզերի և Երևան քաղաքի, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2016 թվականի հունիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված գործարքներն, ըստ տեսակների, ունեն հետևյալ բաշխվածությունը.



2016 թվականի հունիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 3814 օտարման գործարքի 73.4 %-ը կազմել է առուվաճառքը, 26.2 %-ը՝ նվիրատվությունը և 0.4 %-ը՝ փոխանակությունը: Անշարժ գույքի օտարման գործարքի քանակի 39.4 %-ն արձանագրվել է Երևան քաղաքում, իսկ օտարված անշարժ գույքի 38.4 %-ը հանդիսանում են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանները:

2016 թվականի հունիսին, 2016 թվականի մայիսի համեմատ, անշարժ գույքի օտարման գործարքներն աճել են 6.1 %-ով, իսկ 2015 թվականի հունիսի համեմատ՝ նվազել 10.5 %-ով:

2016 թվականի հունիսին Երևան քաղաքում անշարժ գույքի առուվաճառքի գործարքների 65.0 %-ն արձանագրվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների նկատմամբ: Երևան քաղաքում 2016 թվականի հունիսին, 2016 թվականի մայիսի համեմատ, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքի գործարքների քանակն աճել է 15.9 %-ով, իսկ 2015 թվականի հունիսի համեմատ՝ նվազել 2.2 %-ով:

2016 թվականի հունիսին Երևան քաղաքի վարչական շրջաններում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների հետևյալ շուկայական միջինացված գները՝ 1 մ<sup>2</sup> մակերեսի հաշվարկով.

Վարչական շրջաններ	Միջին գները (դրամ)		
	հունիս 2015 թ.	հունիս 2016 թ.	մայիս 2016 թ.
<b>Կենտրոն</b>	428000	428250	428000
<b>Արաբկիր</b>	356600	357300	357100
<b>Քանաքեռ-Զեյթուն</b>	282700	283100	283100
<b>Նոր Նորք</b>	253200	254200	254200
<b>Ավան</b>	260700	261700	261600
<b>Էրեբունի</b>	252100	252350	252300
<b>Շենգավիթ</b>	257200	257700	257600
<b>Դավթաշեն</b>	275950	276750	276650
<b>Աջափնյակ</b>	250200	251000	251000
<b>Մալաթիա-Սեբաստիա</b>	243300	244100	244050
<b>Նուբարաշեն</b>	156800	157350	157300

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2016 թվականի հունիսին Երևան քաղաքում բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մ<sup>2</sup> մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2016 թվականի մայիսի համեմատ՝ աճել է 0.04%-ով:

2016 թվականի հունիսին մարզերում վաճառվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 311 բնակարան, որոնց քանակը 2016 թվականի մայիսի համեմատ աճել է 0.6 %-ով, իսկ 2015 թվականի հունիսի համեմատ՝ նվազել 8.5 %-ով:

2016 թվականի հունիսին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, վաճառված բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների հետևյալ շուկայական միջինացված գները՝ 1 մ<sup>2</sup> մակերեսի հաշվարկով.

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները (դրամ)		
		հունիս 2015 թ.	հունիս 2016 թ.	մայիս 2016 թ.
Արագածոտն	Աշտարակ	116000	116050	116050
	Ապարան	57450	58500	58400
	Թալին	65850	66850	66750
Արարատ	Արտաշատ	96500	98900	98750
	Մասիս	115550	115800	115800
	Վեդի	100700	101750	101750
	Արարատ	75400	77550	77450
Արմավիր	Վաղարշապատ	154150	154200	154200
	Արմավիր	121200	121250	121250
	Մեծամոր	87500	87600	87600
Գեղարքունիք	Սևան	99200	99400	99400
	Գավառ	59800	60600	60550
	Մարտունի	107650	107700	107700
	Վարդենիս	44800	45300	45250
	Ճամբարակ	28700	28750	28750
	Վանաձոր	88400	88600	88600
Լոռի	Ստեփանավան	74500	74750	74750
	Սպիտակ	99800	99850	99850
	Ալավերդի	55000	55900	55750
	Տաշիր	47300	47400	47400
	Թումանյան	11000	11000	11000
	Շամլուղ	8000	8000	8000
	Ախթալա	20200	20500	20500
	Արուսեան	155100	155150	155150
Կոտայք	Նոր Հաճն	128600	128550	128550
	Բյուրեղավան	108150	108250	108250
	Եղվարդ	109400	109900	109850
	Հրազդան	63800	63900	63900
	Ծաղկաձոր	292500	292400	292400
	Զարենցավան	85500	85500	85500
	Գյումրի	109300	109450	109450
Շիրակ	Արթիկ	66700	67300	67250
	Մարալիկ	40700	41100	41050
	Գորիս	122000	123750	123600
Սյունիք	Կապան	92500	95100	94900
	Սիսիան	91150	92200	92200
	Մեղրի	80900	83050	82900
	Ագարակ	46900	47750	47700
	Քաջարան	94650	94950	94850
	Դաստակերտ	8000	8000	8000
	Վայոց ձոր	Վայք	95000	95100
Եղեգնաձոր	125500	126250	126150	
Տավուշ	Ջերմուկ	112900	113300	113200
	Դիլիջան	113150	115600	115500
	Իջևան	118300	118550	118550
	Բերդ	60200	60450	60450
	Նոյեմբերյան	49900	50400	50350
Այրում	31850	31850	31850	

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2016 թվականի հունիսին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների, 1 մ<sup>2</sup> մակերեսի հաշվարկով, շուկայական միջին գները 2016 թվականի մայիսի համեմատ՝ աճել է 0.1%-ով:

2016 թվականի հունիսին հանրապետությունում արձանագրվել է անհատական բնակելի տան 378 առուվաճառքի գործարք, այդ թվում՝ Երևան քաղաքում՝ 102 գործարք, մարզերում՝ 276 գործարք: 2016 թվականի հունիսին, 2016 թվականի մայիսի համեմատ, անհատական բնակելի տների առուվաճառքների գործարքների քանակն աճել է 15.2 %-ով, ընդ որում, Երևանում՝ մնացել է անփոփոխ, իսկ մարզերում՝ աճել 22.1 %-ով: 2016 թվականի հունիսին 2015 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ անհատական բնակելի տների առուվաճառքի գործարքների քանակը նվազել է 1.6 %-ով, ընդ որում, Երևանում՝ 9.7 %-ով, իսկ մարզերում՝ աճել 1.8 %-ով:

2016 թվականի հունիսին Երևան քաղաքի վարչական շրջաններում շինության 250.0 մ<sup>2</sup> և տնամերձի 400.0 մ<sup>2</sup> միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1 մ<sup>2</sup> մակերեսով (ներառյալ տնամերձի միավորի գինը)։

Վարչական շրջաններ	Միջին գները (դրամ)		
	հունիս 2015 թ.	հունիս 2016 թ.	մայիս 2016 թ.
Կենտրոն	476100	476350	476100
Արաբկիր	383000	383200	383000
Քանաքեռ-Զեյթուն	295000	295000	295000
Նորք-Մարաշ	319200	319300	319200
Ավան	270500	270600	270500
Էրեբունի	239750	239750	239750
Շենգավիթ	255000	255000	255000
Դավթաշեն	276000	276100	276000
Աջափնյակ	250050	250100	250100
Մալաթիա-Սեբաստիա	238000	238100	238100
Նուբարաշեն	150800	150800	150800

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2016 թվականի հունիսին Երևան քաղաքում անհատական բնակելի տների շինության 1 մ<sup>2</sup> մակերեսի շուկայական միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը), 2016 թվականի մայիսի համեմատ՝ աճել է 0.03%-ով:

2016 թվականի հունիսին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, շինության 200.0 մ<sup>2</sup> և տնամերձի 1000.0 մ<sup>2</sup> միջին մակերեսներով անհատական բնակելի տների առուվաճառքների (պայմանագրային) գների և առաջարկվող գների վերլուծության արդյունքում ձևավորվել են հետևյալ շուկայական միջինացված գները՝ հաշվարկված շինության 1 մ<sup>2</sup> մակերեսով (ներառյալ տնամերձի միավորի գինը)։

Մարզեր	Քաղաքներ	Միջին գները (դրամ)		
		հունիս 2015 թ.	հունիս 2016 թ.	մայիս 2016 թ.
Արագածոտն	Աշտարակ	136200	136250	136250
	Ապարան	60050	60050	60050
	Թալին	69250	69250	69250

<b>Արարատ</b>	<b>Արտաշատ</b>	100000	100100	100000
	<b>Մասիս</b>	115100	115100	115100
	<b>Վեդի</b>	102300	102300	102300
	<b>Արարատ</b>	88000	88000	88000
<b>Արմավիր</b>	<b>Վաղարշապատ</b>	153100	153150	153150
	<b>Արմավիր</b>	107000	107000	107000
<b>Գեղարքունիք</b>	<b>Սևան</b>	94800	94950	94950
	<b>Գավառ</b>	57100	57100	57100
	<b>Մարտունի</b>	96100	96200	96100
	<b>Վարդենիս</b>	41000	41150	41150
	<b>Ճամբարակ</b>	31100	31100	31100
<b>Լոռի</b>	<b>Վանաձոր</b>	100500	100900	100900
	<b>Ստեփանավան</b>	91000	91200	91200
	<b>Սպիտակ</b>	114000	114050	114000
	<b>Ալավերդի</b>	50200	50300	50200
	<b>Տաշիր</b>	51900	51900	51900
	<b>Թումանյան</b>	12000	12000	12000
	<b>Շամլուղ</b>	14000	14000	14000
	<b>Ախթալա</b>	30000	30000	30000
<b>Կոտայք</b>	<b>Աբովյան</b>	157100	157350	157350
	<b>Նոր Հաճն</b>	129800	129800	129800
	<b>Բյուրեղավան</b>	120500	120500	120500
	<b>Եղվարդ</b>	116100	116100	116100
	<b>Հրազդան</b>	82600	82600	82600
	<b>Ծաղկաձոր</b>	305000	305000	305000
	<b>Չարենցավան</b>	83000	83000	83000
<b>Շիրակ</b>	<b>Գյումրի</b>	119000	119250	119250
	<b>Արթիկ</b>	63100	63450	63450
	<b>Մարալիկ</b>	52000	52000	52000
<b>Սյունիք</b>	<b>Գորիս</b>	130000	130050	130000
	<b>Կապան</b>	100500	100750	100700
	<b>Սիսիան</b>	96500	96500	96500
	<b>Մեղրի</b>	84500	84650	84650
	<b>Ագարակ</b>	46900	46950	46900
	<b>Դաստակերտ</b>	11610	11610	11610
<b>Վայոց ձոր</b>	<b>Վայք</b>	90050	90150	90150
	<b>Եղեգնաձոր</b>	116600	116750	116750
	<b>Ջերմուկ</b>	131300	131300	131300
<b>Տավուշ</b>	<b>Դիլիջան</b>	115000	115650	115550
	<b>Իջևան</b>	123200	123250	123200
	<b>Բերդ</b>	60100	60100	60100
	<b>Նոյեմբերյան</b>	48300	48300	48300
	<b>Այրում</b>	36250	36250	36250

Գնային ինդեքսների ուսումնասիրությունը թույլ է տալիս եզրակացնել, որ 2016 թվականի հունիսին հանրապետության քաղաքներում, բացառությամբ Երևանը, անհատական բնակելի տների շինության 1 մ<sup>2</sup> մակերեսի շուկայական միջին գները (ներառյալ տնամերձի միավորի գինը), 2016 թվականի մայիսի համեմատ՝ աճել է 0.1%-ով:

Ընդհանուր առմամբ, 2016 թվականի հունիսին հանրապետությունում օտարվել է 1245 միավոր (652.39 հա) հող, որից Երևանում՝ 88 միավոր (10.60 հա): Օտարված հողերն, ըստ նպատակային նշանակության, բաշխվել են.

- գյուղատնտեսական նշանակության հող՝ 734 միավոր (608.22 հա), որից Երևանում՝ 4 միավոր (1.22 հա),
- բնակելի կառուցապատման հող՝ 353 միավոր (28.05 հա), որից Երևանում՝ 43 միավոր (3.30 հա),
- հասարակական կառուցապատման հող՝ 127 միավոր (11.94 հա), որից Երևանում՝ 38 միավոր (5.85 հա),
- արդյունաբերական օբյեկտների հող՝ 10 միավոր (2.97 հա), որից Երևանում՝ 2 միավոր (0.22 հա),
- առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքի հող՝ 3 միավոր (0.67 հա),
- հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հող՝ 18 միավոր (0.55 հա), որից Երևանում՝ 1 միավոր (0.002 հա):

2016 թվականի հունիսին հանրապետությունում օտարված հողերից 1007 միավորի (547.77 հա) նկատմամբ իրականացվել է առուվաճառքի գործարք, որից Երևանում՝ 68 միավոր (5.74 հա), նվիրատվության գործարք՝ 228 միավորի (100.53 հա), որից Երևանում՝ 16 միավոր (1.24 հա) և փոխանակության գործարք՝ 10 միավորի (4.09 հա), որից Երևանում՝ 4 միավոր (4.62 հա):

Հանրապետությունում 2016 թվականի հունիսին, 2015 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ, հողերի առուվաճառքի գործարքի քանակը նվազել է 25.6 %-ով: Ընդ որում, գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ առուվաճառքի գործարքի քանակը նվազել է 29.9 %-ով, բնակավայրերի հողերի նկատմամբ՝ 13.3 %-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ՝ 40.0 %-ով: Հողերի առուվաճառքի առավել մեծ ծավալներն արձանագրվել են Արմավիրի մարզում՝ 126.73 հա, որից 123.01 հա գյուղատնտեսական նշանակության են:

Վաճառված հողերի քանակի 23.2 %-ը կամ 235 միավորը (102.51 հա) հանդիսացել է պետական կամ համայնքային սեփականության հող, որից Երևանում՝ 30 միավոր (1.57 հա), իսկ 76.3 %-ը կամ 768 միավորը (445.19 հա) հանդիսացել է մասնավոր սեփականության հող, որից Երևանում՝ 36 միավոր (4.10 հա): 2016 թվականի հունիսին հանրապետությունում գրանցվել է կառուցապատման իրավունքի վաճառքի 4 գործարք (0.06 հա):

Ստորև ներկայացված է 2016 թվականի հունիսին պետական կամ համայնքային, ինչպես նաև մասնավոր սեփականություն հանդիսացող հողերի առուվաճառքի գործարքների քանակների և մակերեսների բաշխվածությունն ըստ մարզերի և Երևան քաղաքի, որտեղ ներառված չեն առողջարարական նպատակներով և հանգստի համար նախատեսված հատուկ պահպանվող տարածքների, հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը և կառուցապատման իրավունքի վաճառքները:

	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող								Մասնավոր սեփականություն հանդիսացող							
	Գյուղ. նշանակության հողեր		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Գյուղ. նշանակության հողեր		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր		հասարակական կառուցապատ. հողեր						բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր		հասարակական կառուցապատ. հողեր	
	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)
Երևան	0	0.00	1	0.18	14	0.74	15	0.65	4	1.22	1	0.04	21	2.19	10	0.65
Արագածոտն	9	16.25	0	0.00	6	0.14	6	0.25	66	27.54	0	0.00	20	2.03	2	0.08
Արարատ	13	18.95	0	0.00	10	0.59	5	0.12	53	26.86	0	0.00	26	2.72	6	0.25
Արմավիր	10	6.43	0	0.00	0	0.00	4	0.03	71	116.59	0	0.00	42	3.66	2	0.03
Գեղարքունիք	3	19.06	0	0.00	2	0.13	8	1.21	25	34.10	2	0.19	11	0.99	1	0.01
Լոռի	1	1.19	1	0.02	6	0.23	7	0.50	136	62.67	1	0.01	11	0.85	3	0.13
Կոտայք	15	21.56	0	0.00	20	0.63	11	0.48	97	93.50	1	0.24	55	5.31	6	0.25
Շիրակ	1	0.44	1	2.19	2	0.02	3	0.05	23	21.44	0	0.00	7	0.16	1	0.01
Սյունիք	13	7.49	1	0.03	7	0.19	4	0.30	31	31.98	0	0.00	4	0.37	0	0.00
Վայոց ձոր	1	0.25	0	0.00	0	0.00	2	0.02	13	4.30	0	0.00	2	0.23	0	0.00
Տավուշ	3	1.19	0	0.00	6	0.33	7	0.11	6	3.82	0	0.00	5	0.24	1	0.01
Ընդամենը	69	92.81	4	2.42	73	3.00	72	3.72	525	424.02	5	0.48	204	18.75	32	1.42

Ստորև ներկայացված է 2016 թվականի հունիսին պետական և համայնքային սեփականություն հանդիսացող հողերի ուղղակի և աճուրդ վաճառքի գործարքների քանակի և մակերեսի բաշխվածությունն ըստ մարզերի, Երևան քաղաքի և ըստ հողերի նպատակային նշանակության, որտեղ ներառված չեն հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը.

	Ուղղակի վաճառք								Վաճառք աճուրդով									
	Ընդամենը		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր				Ընդամենը		Գյուղ. նշանակության հողեր		Արդյունաբերական օբյեկտների հողեր		Բնակավայրերի հողեր			
					բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր		հասարակական կառուցապատ. հողեր								բնակելի կառուցապատ. (տնամերձ) հողեր		Հասարակական կառուցապատ. հողեր	
	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)	Միավոր	Մակերես (հա)
Երևան	19	0.54	1	0.18	11	0.17	7	0.19	11	1.04	0	0.00	0	0.00	3	0.58	8	0.46
Արագածոտն	4	0.15	0	0.00	0	0.00	4	0.15	17	16.49	9	16.25	0	0.00	6	0.14	2	0.10
Արարատ	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	28	19.66	13	18.95	0	0.00	10	0.59	5	0.12
Արմավիր	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	14	6.46	10	6.43	0	0.00	0	0.00	4	0.03
Գեղարքունիք	3	0.06	0	0.00	1	0.04	2	0.02	10	20.34	3	19.06	0	0.00	1	0.09	6	1.19
Լոռի	2	0.03	0	0.00	0	0.00	2	0.03	13	1.91	1	1.19	1	0.02	6	0.23	5	0.47
Կոտայք	9	0.17	0	0.00	7	0.02	2	0.15	37	22.50	15	21.56	0	0.00	13	0.61	9	0.33
Շիրակ	1	0.01	0	0.00	0	0.00	1	0.01	5	2.25	0	0.00	1	2.19	2	0.02	2	0.04
Սյունիք	5	0.05	1	0.03	3	0.01	1	0.01	20	7.97	13	7.49	0	0.00	4	0.18	3	0.30
Վայոց ձոր	0	0.00	0	0.00	0	0.00	0	0.00	3	0.27	1	0.25	0	0.00	0	0.00	2	0.02
Տավուշ	1	0.04	0	0.00	1	0.04	0	0.00	15	1.59	3	1.19	0	0.00	5	0.29	7	0.11
<b>Ընդամենը</b>	<b>44</b>	<b>1.05</b>	<b>2</b>	<b>0.21</b>	<b>23</b>	<b>0.28</b>	<b>19</b>	<b>0.56</b>	<b>173</b>	<b>100.48</b>	<b>68</b>	<b>92.37</b>	<b>2</b>	<b>2.21</b>	<b>50</b>	<b>2.73</b>	<b>53</b>	<b>3.17</b>

2016 թվականի հունիսին հանրապետությունում արձանագրվել է նաև գյուղատնտեսական նշանակության հողերի ուղղակի վաճառքի 1 գործարք (0.44 հա ընդհանուր մակերեսով):

Հանրապետությունում 2016 թվականի հունիսին, 2015 թվականի հունիսի համեմատ, հողերի աճուրդ վաճառքի գործարքների քանակն աճել է 24.4 %-ով: Ընդ

որում, Երևանում աճել է 10.0 %-ով, իսկ մարզերում՝ 26.5 %-ով: Գյուղատնտեսական նշանակության հողերի նկատմամբ աճուրդ վաճառքի գործարքների քանակն աճել է 36.0 %-ով, բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի նկատմամբ՝ 38.9 %-ով, հասարակական կառուցապատման հողերի նկատմամբ՝ 3.9 %-ով, արդյունաբերական օբյեկտների հողերի նկատմամբ նվազել է 60.0 %-ով:

Ստորև աղյուսակում ներկայացված են 2016 թվականի հունիսին գյուղատնտեսական նշանակության հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1 հա մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները:

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանում	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքներ աճուրդով					Մասնավոր սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշ. հողերի վաճառքներ				
	Միավորների քանակ	Մակերես (հա)	պայմանագրային գները՝ 1 հա մակերեսի հաշվարկով (հազար դրամ)			Միավորների քանակ	Մակերես (հա)	շուկայական գները՝ 1 հա մակերեսի հաշվարկով (հազար դրամ)		
			Նվազագույն	Ստավելագույն	Միջին			Նվազագույն	Ստավելագույն	Միջին
<b>Արագածոտնի մարզ</b>										
Աշտարակ	5	6.91	86.7	4498.3	1137.5	41	15.82	365.0	12000.0	3380.0
Ապարան								86.5	2727.3	630.0
Թալին	4	9.34	37.9	97.1	52.8	21	3.88	93.6	5494.5	745.0
Ծաղկահովիտ						4	7.84	79.5	1000.0	390.0
<b>Արարատի մարզ</b>										
Արտաշատ	12	17.67	102.7	1339.7	423.5	28	9.75	335.1	10833.3	2718.7
Մասիս						9	2.91	200.0	11904.8	3275.0
Վեդի	1	1.28	82.0	82.0	82.0	14	13.86	207.0	10795.1	1970.0
<b>Արմավիրի մարզ</b>										
Արմավիր						33	17.76	294.3	9090.0	1365.5
Բաղրամյան	1	0.41	76.5	76.5	76.5	11	83.77	90.6	2561.1	920.0
Վաղարշապատ	9	6.02	69.1	607.3	343.7	22	13.79	444.4	11764.7	1935.0
<b>Գեղարքունիքի մարզ</b>										
Գավառ						11	3.23	199.8	1875.0	505.0
Ճամբարակ								60.5	953.3	352.0
Մարտունի						1	0.11	51.1	2850.0	780.0
Սևան	1	0.06	900.1	900.1	900.1			52.2	2134.8	355.0
Վարդենիս	2	19.00	349.8	555.5	452.7	13	30.76	41.2	2575.1	395.0
<b>Լոռու մարզ</b>										
Ալավերդի						4	1.59	170.4	6424.2	560.0
Գուգարք	1	1.19	1456.2	1456.2	1456.2	3	1.25	234.6	6065.9	810.0
Սպիտակ								250.0	5555.5	675.0
Ստեփանավան						11	10.06	90.6	1686.6	420.0
Տաշիր						117	46.45	45.3	1384.4	185.0
<b>Կոտայքի մարզ</b>										
Արովյան	3	0.36	176.3	753.1	413.8	27	9.35	279.3	11942.7	3964.0
Եղվարդ	11	21.01	44.6	5712.6	1417.3	56	77.31	174.4	11971.8	2512.1
Հրազդան	1	0.19	125.9	125.9	125.9	11	6.25	130.5	10256.4	968.5
<b>Շիրակի մարզ</b>										
Ախուրյան						6	8.35	252.0	1693.1	652.4
Ամասիա								40.9	261.0	136.5
Անի						6	4.75	110.6	546.9	452.4
Աշոցք						1	0.46	58.5	215.8	138.5
Արթիկ						10	7.88	79.4	1428.6	512.0
<b>Սյունիքի մարզ</b>										
Գորիս						2	3.91	92.6	1023.2	787.5
Կապան	3	1.39	280.4	931.9	498.5	5	5.02	120.0	841.6	448.3



Մեղրի	10	6.10	125.5	1246.3	505.9	1	0.07	193.0	3000.0	810.0
Սիսիան						23	22.98	46.3	1977.4	584.5
Վայոց ձորի մարզ										
Եղեգնաձոր	1	0.25	194.4	194.4	194.4	8	1.56	125.0	10000.0	1763.0
Վայք						5	2.73	58.8	1430.7	600.0
Տավուշի մարզ										
Բերդ						2	0.31	213.3	3783.8	690.0
Իջևան	1	0.77	1300.0	1300.0	1300.0	2	0.52	267.5	9454.5	1530.0
Նոյեմբերյան	2	0.43	726.1	726.5	726.3	2	3.00	46.7	7368.4	985.0

Գյուղատնտեսական նշանակության հողերի գների փոփոխման միջակայքի մեծությունը կախված է հողերի տեղադրությունից և հողատեսքերից:

Ստորև աղյուսակում ներկայացված են 2016 թվականի հունիսին բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի պայմանագրային և շուկայական միջին գների վերլուծությունների արդյունքները՝ 1000.0 մ<sup>2</sup> մակերեսի հաշվարկով, որտեղ ներառված չեն հողերի դատարանի վճռով և ուղղակի վաճառքների տվյալները.

Տարածաշրջանի (նախկին շրջան) անվանում	Պետական և համայնքային սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի վաճառքներ աճուրդով					Մասնավոր սեփականություն հանդիսացող բնակելի կառուցապատման (տնամերձ) հողերի վաճառքներ				
	Միավորների քանակ	Մակերես (մ <sup>2</sup> )	պայմանագրային գները 1000.0 մ <sup>2</sup> մակերեսի հաշվարկով (հազար դրամ)			Միավորների քանակ	Մակերես (մ <sup>2</sup> )	շուկայական գները 1000.0 մ <sup>2</sup> մակերեսի հաշվարկով (հազար դրամ)		
			Նվազագույն	Առավելագույն	Միջին			Նվազագույն	Առավելագույն	Միջին
Արագածոտնի մարզ										
Աշտարակ	5	1109.5	2274.5	3673.5	2565.7	16	14848.0	130.7	22200.0	2592.3
Ապարան	1	263.2	539.5	539.5	539.5	3	4050.0	124.1	609.6	390.0
Թալին						1	1400.0	63.2	1454.8	152.5
Ծաղկահովիտ								60.0	214.3	93.5
Արարատի մարզ										
Արտաշատ	1	1002.7	538.0	538.0	538.0	13	16443.5	173.9	7140.3	905.6
Մասիս	4	2437.8	770.0	3123.4	1965.5	12	9240.0	187.5	25000.0	1208.5
Վեդի	5	2491.4	683.3	2350.4	1021.1	1	1500.0	126.1	5000.0	664.0
Արմավիրի մարզ										
Արմավիր						11	10160.0	131.6	9090.9	1215.5
Բաղրամյան								100.0	833.3	240.0
Վաղարշապատ						30	25713.0	197.4	26528.4	1530.0
Գեղարքունիքի մարզ										
Գավառ						3	2169.8	186.6	1084.3	683.6
Ճամբարակ								71.3	2286.2	146.8
Մարտունի						6	4780.0	119.3	5000.0	280.0
Սևան	1	947.9	410.5	410.5	410.5	2	2960.0	240.0	3110.4	345.0
Վարդենիս								72.5	987.2	151.5
Լոռու մարզ										
Ալավերդի	3	1765.2	398.4	2750.1	1966.2	5	3241.9	114.3	1388.9	217.0
Գուգարք	2	350.6	2105.7	2107.7	2106.7	3	2205.0	77.9	14083.3	1260.3
Սպիտակ						1	1600.0	104.9	1348.3	198.3
Ստեփանավան						1	840.0	88.2	1666.7	175.5
Տաշիր	1	165.0	316.5	316.5	316.5	1	600.0	45.3	400.0	90.0
Կոտայքի մարզ										
Աբովյան	10	5324.0	1543.5	5434.3	4119.8	24	25770.5	264.5	35353.5	1945.0
Եղվարդ	2	372.7	581.5	1940.4	1261.0	25	23208.6	173.6	27000.0	2856.7
Հրազդան	1	422.0	3234.8	3234.8	3234.8	5	3336.0	117.7	34848.5	1318.3
Շիրակի մարզ										
Ախուրյան	1	200.0	10500.0	10500.0	10500.0	2	442.0	113.6	18750.0	333.0

Ամսսիա								45.3	274.7	72.0
Անի								67.9	180.6	210.0
Աշոցք								40.8	144.0	65.0
Արթիկ	1	27.0	2875.2	2875.2	2875.2	4	1139.0	111.8	5000.0	217.5
Սյունիքի մարզ										
Գորիս						2	1210.0	112.2	1700.0	367.4
Կապան	4	1844.9	266.4	2500.0	1374.8	1	2017.0	67.9	2638.9	355.0
Մեղրի								68.5	632.9	270.0
Սիսիան						1	480.0	123.5	875.0	250.0
Վայոց ձորի մարզ										
Եղեգնաձոր						2	2320.0	96.7	7659.6	505.8
Վայք								120.7	1448.3	250.0
Տավուշի մարզ										
Բերդ								75.8	810.0	125.3
Իջևան	2	615.9	1552.6	3000.0	2276.3	4	1405.2	74.1	14423.1	512.4
Նոյեմբերյան	3	2245.9	891.0	891.0	891.0			125.0	1948.1	252.0

2016 թվականի հունիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 666 վարձակալության գործարքը կազմել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումների քանակի 4.5 %-ը: Ընդ որում, վարձակալության գործարքի 76.9 %-ն իրականացվել է իրավաբանական անձանց կողմից:

2016 թվականի հունիսին, 2016 թվականի մայիսի համեմատ, անշարժ գույքի վարձակալության գործարքների քանակն աճել է 5.7 %-ով, իսկ 2015 թվականի հունիսի համեմատ՝ նվազել 4.4 %-ով:

2016 թվականի հունիսին հանրապետությունում գրանցվել է բազմաբնակարան բնակելի շենքերի 44 բնակարանի, 67 անհատական բնակելի տան, 301 հասարակական և 58 արտադրական նշանակության օբյեկտի, 181 հողի և 15 ավտոտնակի վարձակալության գործարք: Հողերի կառուցապատման, սերվիտուտի և անհատույց օգտագործման իրավունքների պետական գրանցումներն ընդգրկված են հողերի վարձակալության գործարքներում:

2016 թվականի հունիսին Երևան քաղաքում հողերի նկատմամբ գրանցված 3 վարձակալության գործարքի քանակը 2016 թվականի մայիսի համեմատ նվազել է 66.7 %-ով, իսկ 2015 թվականի հունիսի համեմատ՝ 62.5 %-ով:

2016 թվականի հունիսին հանրապետությունում վարձակալված 379.70 հա հողից 0.06 հա վարձակալվել է Երևանում: Մարզերում վարձակալված 379.65 հա հողերից 368.23 հա կազմում են գյուղատնտեսական նշանակության, 6.63 հա արդյունաբերական օբյեկտների, 0.04 հա հիդրոէլեկտրակայանների համար նախատեսված էներգետիկայի օբյեկտների հողերը: Առավել մեծ մակերեսով հող վարձակալվել է Լոռու մարզում՝ 97.72 հա, որից 91.52 հա գյուղատնտեսական նշանակության:

2016 թվականի հունիսին անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1838 գրավադրման գործարքը կազմել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումների քանակի 12.4 %-ը: Գրավադրման գործարքներից ծագող իրավունքի պետական գրանցումների քանակը, 2016 թվականի մայիսի համեմատ, նվազել է 6.6 %-ով, իսկ 2015 թվականի հունիսի համեմատ՝ աճել 15.7 %-ով:

Գրավադրման գործարքն առավելապես իրականացվել է բազմաբնակարան բնակելի շենքերի բնակարանների (51.5 %), անհատական բնակելի տների (24.9 %), հասարակական նշանակության օբյեկտների (12.2 %) և հողերի (6.4 %) նկատմամբ:

Երևան քաղաքում անշարժ գույքի նկատմամբ իրականացված 1023 գրավադրման գործարքից ծագող իրավունքի պետական գրանցումների քանակը, 2016

թվականի մայիսի համեմատ նվազել է 2.0 %-ով, իսկ 2015 թվականի հունիսի համեմատ՝ աճել 13.8 %-ով:

2016 թվականի հունիսին հանրապետությունում գրավադրվել է 208.22 հա հող, որից 4.95 հա Երևանում: Ընդ որում, գրավադրված հողի 95.6 %-ը կամ 199.03 հա գյուղատնտեսական նշանակության, որից 0.21 հա Երևանում: Առավել մեծ մակերեսով հող գրավադրվել է Արագածոտնի մարզում՝ 140.55 հա, որից 140.41 հա գյուղատնտեսական նշանակության հողեր:

2016 թվականի հունիսին հանրապետությունում իրականացվել է հիփոթեքային գրավադրման 163 գործարք: 2016 թվականի հունիսին հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը, 2016 թվականի մայիսի համեմատ, աճել է 1.9 %-ով, իսկ 2015 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ՝ 14.8 %-ով:

Երևանում իրականացվել է հիփոթեքային գրավադրման 97 գործարք, որը 2016 թվականի մայիսի համեմատ մնացել է անփոփոխ, իսկ 2015 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ՝ նվազել 4.9 %-ով: Մարզերում հիփոթեքային գրավադրման գործարքների քանակը, 2016 թվականի մայիսի համեմատ, աճել է 4.8 %-ով, իսկ 2015 թվականի նույն ժամանակահատվածի համեմատ՝ 65.0 %-ով:

2016 թվականի հունիսին հանրապետությունում արձանագրվել է անշարժ գույքի սեփականության իրավունքի 1985 առաջնային գրանցում՝ առանց գործարքի, որոնց քանակը, 2016 թվականի մայիսի համեմատ, աճել է 29.1 %-ով, իսկ 2015 թվականի հունիսի համեմատ՝ նվազել 8.7 %-ով: Առաջնային գրանցումների տեսակարար կշիռն անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցումներում կազմել է 13.4 %: Առաջնային գրանցումների քանակի բարձր տոկոսաչափն արձանագրվել է Երևանում (24.2 %):

## **« Կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտե**